



**ՀՄՀ-Հայաստան Ծրագիր
Աշխատանքային Հանդիպում
Հունիսի 22-23, 2007 թ.
ք. Ծաղկաձոր, Կեչառիս համալիր**

Աշխատանքային հանդիպման արդյունքների ամփոփում

Ընդհանուր նկարագիր

Ծրագրի իրականացման նպատակով ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը պայմանագրեր է կնքել ծրագրի հիմնական բաղադրիչներն իրականացնող կազմակերպությունների հետ: Չնայած որ այս կազմակերպությունները հանդիսանում են առանձին կառույցներ և ունեն առանձին գործունեության պլան և նպատակներ, սակայն բոլորի գերագույն նպատակը մեկն է. նպաստել աղքատության նվազեցմանը Հայաստանի գյուղական վայրերում: Այս առումով ՀՄՀ-Հայաստանը մեծապես կարևորում է իր իրականացնող կազմակերպությունների մոտ այս գիտակցության խորը ընկալումը, ինչպես նաև համագործակցությունը և համատեղ մոտեցումների կիրառումը միանման խնդիրներին առնչվելիս: Իրականացնող կառույցների և ՀՄՀ-Հայաստանի աշխատանքները համակարգելու և ծրագրի արդյունավետ իրականացման նպատակով՝ ս/թ հունիսի 22-23 ՀՄՀ-Հայաստանը նախաձեռնեց և կազմակերպեց աշխատանքային հանդիպում իր իրականացնող կազմակերպությունների հետ ք. Ծաղկաձորում: Բոլոր իրականացնող կազմակերպություններին առաջարկվել էր ներկայացնել Իրականացման պայմանագրից բխող աշխատանքների շրջանակը, առկա առաջընթացը, ինչպես նաև անդրադառնալ փոխադարձ համագործակցության հարցերին:

Հանդիպմանը հրավիրված էին նաև ՀՄԿ Հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչները, ինչպես նաև Շահառուների խորհրդի անդամները: Հանդիպման օրակարգը, մասնակիցների կազմը, ինչպես նաև բոլոր ներկայացումները և հարակից նյութերը կցվում են:

Հանդիպման հիմնական նպատակները.

- կազմակերպել համատեղ աշխատանքային հանդիպում ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի և իրականացնող կազմակերպությունների մասնակցությամբ.
- հանդիպման մասնակիցներին ներկայացնել ՀՄՀ-Հայաստան ծրագրի կառուցվածքը և հիմնական նպատակները, ինչպես նաև ծրագրային առանձին բաղադրիչները և դրանց իրականացման մեխանիզմները.
- ներկայացնել մինչ այժմ իրականացված աշխատանքները և գրանցված արդյունքները.
- վերհանել և քննարկել ընդհանուր խնդիրները, ինչպես նաև առաջարկել հնարավոր լուծումներ.
- ներկայացնել ՀՄԿ-ի և ՀՄՀ-ի կողմից որդեգրված մոտեցումները ընդհանուր ծրագրային և ադմինիստրատիվ հարցերի շուրջ.
- գտնել համագործակցության և շփման նոր մոդելներ և դրանք կիրառել ամենօրյա

աշխատանքում.

- ոչ ֆորմալ հարցաթերթիկի միջոցով մասնակիցների ուշադրությունը հրավիրել ՀՄՀ ծրագրային հարցերին և ստեղծել անմիջական հաղորդակցության մթնոլորտ.
- պարզաբանել իրականացնող կազմակերպությունների գործունեության նմանությունները և տարբերությունները:

Հանդիպման կառուցվածքը

Մաս առաջին.

ՀՄՀ-Հայաստան ծրագրի ներկայացում ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի և ՀՄԿ-ի կողմից; ԻԿ-ների ներկայացումներ՝ Իրականացման պայմանագրից բխող աշխատանքների շրջանակը, առկա առաջընթացը, կազմակերպական կառուցվածքը և համագործակցության հարցեր:

Մաս երկրորդ.

«Խորհրդակցական գործընթաց և հասարակայնության հետ կապեր»

- Համագործակցություն և փոխհարաբերություններ
- Ինչն է արդյունավետ և ինչը՝ ոչ
- Ի՞նչ և ինչպե՞ս կարող ենք բարելավել

ՀՄՀ-Հայաստան թիմի կողմից անցկացված ոչ ֆորմալ հարցման արդյունքների ամփոփում:

Մաս երրորդ.

Ոլորտային քննարկում - խորհրդակցություն ՀՄՀ-Հայաստան թիմերի հետ (Բաժանում խմբերի)

- Ադմինիստրատիվ և ֆինանսական հարցեր
- Գնումների գործընթաց
- Մոնիտորինգ և գնահատում
- Բնապահպանական և սոցիալական ազդեցություն



Հանդիպման հիմնական արդյունքները

- Հանդիպման մասնակիցները ծանոթացան ՀՄՀ ծրագրի իրականացնող կազմակերպություններին, նրանց կողմից իրականացվող աշխատանքներին, մինչ այժմ գրանցված առաջընթացին և այլն.
- ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը և ՀՄԿ-ն ներկայացրեցին ՀՄՀ ամբողջական ծրագիրը և իրենց ակնկալիքները ԻԿ-ների գործունեությունից.
- Քննարկումների արդյունքում վեր հանվեցին համագործակցության խնդիրները, ներկայացվեցին ծրագրերի իրականացման արդյունքում հաճախ հանդիպող խոչընդոտները, ինչպես նաև քննարկվեցին ֆինանսական և ադմինիստրատիվ հարցեր, հասարակայնության հետ կապերը և այլ ծրագրային հարցեր.
- Առաջարկվեցին նոր լուծումներ քննարկումների արդյունքում ներկայացված ընդհանուր խնդիրներին.
- ՀՄՀ ՊՈԱԿ-ի կողմից անցկացված ոչ ֆորմալ հարցաթերթիկի միջոցով մասնակիցների ուշադրությանը ներկայացվեցին ծրագրային մի շարք հարցեր.
- Չեռք բերվեցին համագործակցության նոր պայմանավորվածություններ և կապեր:

Հանդիպման առաջին մասի աշխատանքների ամփոփում.



1. Բացման խոսք

*Արա Հովսեփյան, Գլխավոր գործադիր տնօրեն,
ՀՄՀ-Հայաստան*

Արա Հովսեփյանը իր բացման խոսքում նշեց, որ ՀՄՀ ծրագրի իրականացման այս փուլում արդեն իրականացման պայմանագրեր են կնքվել ծրագրային հիմնական բաղադրիչներն իրականացնող կառույցների հետ: Նա հավասարապես կարևորեց բոլոր իրականացնող կառույցների աշխատանքները ծրագրի հիմնական նպատակների իրականացման գործընթացում և ասեց, որ այսօր պահանջ կա, որպեսզի ծրագրի յուրաքանչյուր օղակ հասնակա և գիտակցի, որ հանդիսանում է ամբողջի մի մասնիկ, գտնի ընդհանուր խնդիրները, ինչպես նաև դրանց լուծման լավագույն տարբերակները: Այս ամենի նպատակով ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը նախաձեռնել է այս հանդիպումը և նպատակ ունի ներկայացնել մինչ այժմ գրանցված առաջընթացը, վերհանել առկա հարցերը և քննարկել արդյունավետ համագործակցության և փոխհարաբերությունների նոր մեխանիզմները:

2. Ողջույնի խոսք

*Ալեքս Ռ-ասին, Հայաստանի ծրագրի տնօրեն,
ՀՄԿ*

Պարոն Ռ-ասինը ողջունեց մասնակիցներին և հույս հայտնեց, որ այս հանդիպումը կնպաստի ՀՄՀ-Հայաստան ծրագրի արդյունավետության բարձրացմանը և համակարգմանը: Ա. Ռ-ասինը ներկայացրեց ՀՄԿ Գլխավոր գործադիր տնօրեն դեսպան Ջոն Դանիլովիչի այցը Հայաստան, ՀՄԿ դիրքորոշումը ՀՀ խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ, նշեց նաև շինարարական աշխատանքների արագ սկսման անհրաժեշտության մասին: Ներկայացվեց նաև ԱՄՆ դեսպանատան կողմից իրականացված նոր ծրագիրը, որի նպատակն է համակարգել Հայաստանում դրոնր կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքները հաճախ հանդիպող շփոթումներից խուսափելու համար:

3. ՀՄՀ Հայաստանյան ծրագրի ամփոփ ներկայացում

Նանե Աճեմյան, Մամլոք քարտուղար

Նանե Աճեմյանը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ծրագրի բաղադրիչների հիմնական ցուցանիշները, նպատակները, իրականացման ժամանակացույցը, ինչպես նաև ՀՄՀ-Հայաստան ծրագրի և ՊՈԱԿ-ի ներքին կառուցվածքը:

Իրականացնող կազմակերպությունների ներկայացումներ

**4. Ոռոգվող գյուղատնտեսություն
ենթածրագրի Իրականացման
պայմանագիր և հարակից խնդիրներ.**

*«Ջրային տնտեսության զարգացման եւ
բարեփոխումների ԾԻԳ»-ի ներկայացմամբ*

Մինչ Ջրային ԾԻԳ-ի ներկայացման սկսելը հանդես եկավ Ոռոգվող գյուղատնտեսություն
ենթածրագրի ղեկավար Տիգրան Քալանթարյանը. նա ներկայացրեց ոլորտի
հիմնախնդիրները և փաստեց, որ այսօր մեծ է ԾԻԳ-ի դերը ոռոգման համակարգի
բարելավման և կայացման գործընթացում:

«Ջրային տնտեսության զարգացման եւ բարեփոխումների ԾԻԳ»-ի տնօրենի տեղակալ
Արտակ Երզնյանը ներկայացրեց ՀՄՀ ծրագրի շրջանակներում կնքված իրականացման
պայմանագրով նախատեսված գործողությունները, մինչ այժմ իրականացված
աշխատանքները, գրանցված առաջընթացը, ինչպես նաև Ոռոգման ԾԻԳ-ի կառուցվածքը:
Ներկայացվեցին նաև գործունեության ընթացքում ծագած հիմնական խնդիրները:

Զննարկված հարցեր

- *Մյուս իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության,
փոխհարաբերությունների հարցեր.*
- *Խորհրդակցական գործընթացի կազմակերպման հարցը.*

5. «Ջրից դեպի շուկա» ծրագրային բաղադրիչի Իրականացման պայմանագիր և հարակից խնդիրներ. *ACDI/VOCA կազմակերպության
ներկայացմամբ*

Ծրագրի ղեկավարի տեղակալ (ԷյՄԻԴԻԱյ/ՎՕԿԱ կազմակերպություն) Արտակ
Հարությունյանը մասնակիցների ուշադրությունը հրավիրեց «Ջրից դեպի շուկա» ծրագրի
շրջանակներում նախատեսված գործողությունների լայն շրջանակին, ներկայացրեց
ներկա առաջընթացը և այն հիմնական խնդիրները, որոնք ծագում են ծրագրի
իրականացման ընթացքում: Վերապատրաստման բաղադրիչի խորհրդատու Մակրիտա
Ավջյանը տեղեկացրեց վերապատրաստման բաղադրիչի ներկա արդյունքները,
առանձնահատուկ նշելով ֆերմերների բարձր գնահատականը իրականացվող
դասընթացների վերաբերյալ:

Զննարկված հարցեր

- *Համագործակցության և փոխհարաբերությունների հարցեր.*
- *Դասընթացներից ստացված գիտելիքների կիրառման հարցը.*
- *Գյուղատնտեսության ոլորտում օրգանական նյութերի կիրառման հարցը.*

6. Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի Իրականացման պայմանագիր և հարակից խնդիրներ. *«Հայաստանի ավտոմոբիլային
ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ*

Հետաքրքրական էր «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն»
ՊՈԱԿ-ի ներկայացումը, որտեղ ծրագրային յուրաքանչյուր բաղադրիչ ներկայացրեց իր
պատասխանատուն:

Միջոցառումների հարցեր



Մերգեյ Բալասանյան, Մոնիտորինգի և գնահատման գծով մասնագետ, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ

7. Մոնիտորինգի և գնահատման բաղադրիչի ներկայացում

Դիանա Մարտիրոսովա, ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտության բաժնի պետ

Այս բաղադրիչը ներկայացրեցին ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի մոնիտորինգի և գնահատման մասնագետ Մերգեյ Բալասանյանը և ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտության բաժնի պետ Դիանա Մարտիրոսովան: Պարոն Բալասանյան շեշտը հիմնականում դրեց մոնիտորինգի ցուցանիշների համակարգի, մոնիտորինգի և գնահատման գործիքների, տվյալների աղբյուրների վրա: Տիկին Մարտիրոսովան իր հերթին ներկայացրեց կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունը Հայաստանում, դրա առանձնահատկությունները և հետազոտության ՀՄՀ ցուցանիշները:

Քննարկված հարցեր

Նախատեսված տնային տնտեսությունների հետազոտությունների բավարար և ներկայացուցչական լինելու հարցը.

8. Բնապահպանական և սոցիալական ազդեցության հարցերի ներկայացում

Արմինե Սիմոնյան Բնապահպանության և սոցիալական գծով ղեկավար, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ

Ինչպես հայտնի է ՀՄՀ-Հայաստան ծրագրի կարևորագույն բաղադրիչներից և պահանջներից է Բնապահպանական և սոցիալական ազդեցության հարցերը. սա նաև ՀՄՀ-Հայաստան ծրագրի միակ բաղադրիչն է, որի իրականացնող կազմակերպությունը դեռ ընտրված չէ: Ծրագրի բնապահպանական և սոցիալական գնահատումը ամբողջությամբ ներկայացրեց Բնապահպանության և սոցիալական գծով ղեկավար Արմինե Սիմոնյանը:

9. Գնումների գործընթացի ներկայացում

Գոհար Մուսայելյան ,Գնումների մասնագետ, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ

Գնումների գործընթացը, որը նույնպես ծրագրի համար բացառիկ կարևոր նշանակություն ունի ներկայացրեց Գնումների ղեկավար Գոհար Մուսայելյանը: Նշվեց, որ ծրագրի շրջանակներում ՀՄՀ Գնումների գործակալներ են հանդիսանում ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ը, Ջրային ԾԻԳ-ը, ՀայԱվտոճան ՊՈԱԿ-ը, իսկ մյուս իրականացնող կազմակերպությունների համար գնումների գործակալ հանդիսանում է ՀՄՀ ՊՈԱԿ-ը: Նշվեցին ներկայումս կիրառվող մեխանիզմները և գնման ու գնահատման գործընթացների կազմակերպման հարցերը, ինչպես նաև գնումների գործընթացում և պլանում վերջերս տեղ գտած փոփոխությունները:

Քննարկված հարցեր.

- ՀՄՀ-Հայաստանի փոխհարաբերությունների հարցը Ջրային ԾԻԳ-ի հետ գնումների գործընթացի արդյունավետ կազմակերպման հարցերում.
- Ժամանակի արդյունավետ օգտագործման հարցը.
- Միջուկային փաստաթղթերի ստանդարտացման խնդիրը.



Մաս երկրորդ

«Խորհրդակցական գործընթաց և հասարակայնության հետ կապեր»

Արա Հովսեփյանը նշեց, որ ծրագրի բնույթից և պահանջներից ելնելով ինչպես ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը, այնպես էլ ծրագրի իրականացնող կառույցները մշտապես գտնվում են հասարակայնության ուշադրության կենտրոնում և պարբերաբար առնչվում են զանգվածային լրատվամիջոցների հետ: Այս առումով կարիք է առաջ գալիս համակարգելու և սահմանելու ինֆորմացիայի տրամադրման, հաղորդակցությունների ներկայացման և համագործակցության հարցերը: ՀՄՀ-Հայաստանը մշակել և գործածության մեջ է դրել «Հանրության իրազեկման և հաղորդակցման ռազմավարություն» և «Խորհրդակցական գործընթացի ռազմավարություն» փաստաթղթերը: Կարևոր է, որպեսզի իրականացնող կառույցները նույնպես նշված ռազմավարությունների մաս կազմեն և հասարակայնության հետ կապերի իրենց գործունեությունը համակարգվի ՀՄՀ-Հայաստանի կողմից: Պարոն Հովսեփյանը առաջարկեց իրականացնող կառույցներին ներկայացնել իրենց տեսակետները հասարակությանը տեղեկատվության տրամադրման, առանձին մամլո քարտուղարների հաստիքների ավելացման կամ ընդհանրապես ՋԼՄ-ների հետ աշխատանքները ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի միջոցով իրականացման հարցերի շուրջ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրականացնող կառույցների գործունեության ոլորտները և կառուցվածքը տարբեր են, ներկայացվեցին տարբեր տեսակետներ, մասնավորապես՝

- հասարակայնության հետ կապերը համակարգել ՀՄՀ-Հայաստանի հետ – Ռոռզման ԾԻԳ, ՀայԱվտոճան ՊՈԱԿ
- լիազորել ՀՄՀ-Հայաստանին ներկայացնել կառույցը ՋԼՄ-ների հետ առնչվելիս և չունենալ առանձին մամլո քարտուղար - ԱյՍԻԴԻԱյ/ՎՈԿԱ

- ինքնուրույն հանդես գալ տեղեկատվական և հասարակայնության հետ կապված հարցերում, քանի որ ՀՄՀ-Հայաստան ծրագիրը հանդիսանում է կառույցի բազմաթիվ ծրագրերից մեկը - ԱՎԾ

Չնայած ներկայացված տարբեր կարծիքների մեկ բան հստակ էր. տեղեկատվության հոսքը պետք է համակարգվի ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից, պետք է սահմանվեն այն չափանիշները, որոնցով առաջնորդվելով իրականացնող կազմակերպությունները որոշեն, թե տեղեկատվության ինչ չափով կարող են հանդես գալ:

Որոշվեց՝

1. լրամշակել ՀՄՀ-Հայաստան ծրագրի Հանրության իրազեկման և հաղորդակցման ռազմավարությունը՝ հիմնվելով ներկայացված առաջարկությունների վրա, և նոր տարբերակը ներկայացնել իրականացնող կառույցների քննարկմանը;
2. սահմանել հնարավոր տեղեկատվության տրամադրման այն չափորոշիչները, որոնցով կառաջնորդվեն իրականացնող կառույցները հասարակայնության հետ առնչվելիս:

Մինչ առաջին օրվա աշխատանքների ավարտը ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի մոնիտորինգի և գնահատման ղեկավար Էսթեր Հակոբյանը ամփոփեց մասնակիցների կողմից լրացված հարցաթերթիկների արդյունքները: Է. Հակոբյանը նախ ներկայացրեց անցկացված հարցման նպատակները և ակնկալվող արդյունքները. ոչ ֆորմալ և որոշ առումով հումորային հարցաթերթիկի անցկացումը նպատակ ուներ մասնակիցներին աշխուժություն հաղորդել, բոլորի ուշադրությունը հրավիրել ծրագրային մի շարք կետերի վրա և ստեղծել նոր շփումների և միմյանց հետ ծանոթանալու միջավայր: Յուրաքանչյուր հարցի ներկայացման հետ տվյալ հարցի շուրջ ծավալվեց նաև ոչ ֆորմալ քննարկում և մասնակիցները հնարավորություն ունեցան ներկայացնելու իրենց կարծիքները և ակնկալիքները այս կամ այն հարցի կապակցությամբ:

Վերջում Արա Հովսեփյանը ամփոփեց առաջին օրվա աշխատանքները և ներկայացրեց հաջորդ օրվա ընթացքում նախատեսված օրակարգը:

Աշխատանքային հանդիպման երրորդ մասի ամփոփում



Ոլորտային քննարկում - խորհրդակցություն ՀՄՀ-Հայաստան թիմերի հետ

Հանդիպման մասնակիցները բաժանվեցին չորս հիմնական ոլորտային խմբերի քննարկելու ծրագրի իրականացման ընթացքում ծագած հիմնական խնդիրները ինչպես ընդհանուր բնույթի, այնպես էլ ամենօրյա աշխատանքների կազմակերպման և համակարգման հարցերի շուրջ: Ստորև Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում աշխատանքային խմբերի քննարկումների ամփոփումները կազմված համապատասխան խմբերի պատասխանատուների կողմից:

Ադմինիստրատիվ և վարչական հարցերի աշխատանքային խումբ Քննարկումների ամփոփում, Բաբկեն Մնացականյան

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի աշխատակազմի հետ իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչների Ծաղկաձորում տեղի ունեցած հանդիպման ժամանակ 2007թ. հունիսի 23-ին, առավոտյան տեղի ունեցավ ֆինանսական և վարչական այնպիսի հարցերի քննարկում, որոնք հետաքրքրություն էին ներկայացնում բոլոր մասնակիցների համար ինչպես ծրագրի սահուն առաջընթացն ապահովելու առումով, այնպես էլ առօրյա աշխատանքի ճիշտ պլանավորման և անխափան իրագործման առումով: Քննարկմանը մասնակցում էին հետևյալ անձինք.

- Բաբկեն Մնացականյան, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր ֆինանսական ղեկավար
- Արմեն Թորգոմյան, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գրասենյակի կառավարիչ
- Տիգրան Քալանթարյան, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Ռոռզման ծրագրի ղեկավար
- Հակոբ Պետրոսյան, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ճանապարհների ծրագրի ղեկավար
- Նանե Աճեմյան, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի մամլո քարտուղար
- Էլիզա Պետրոսյան, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գործադիր օգնական
- Կարեն Բադալյան, Հայավտոճան ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ
- Արտակ Երզնյան, Ռոռզման ԾԻԳ-ի տնօրենի տեղակալ

Քննարկման ընթացքում Արմեն Թորգոմյանը խոսեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին պատկանող ավտոմեքենաների անվանանշման, վարչական աշխատանքներում համակարգված մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտության մասին:

Հայավտոճան ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալը տեղեկացրեց կազմակերպության աշխատակիցների համար սոցիալական ապահովագրության տարածքային կենտրոններին ներկայացվող անհատական հաշիվներ բացելու համար նախատեսված հայտերի հետ կապված խնդրի վերաբերյալ: Հայտերը ժամանակին չեն ներկայացվել և կազմակերպության ղեկավարությունը չգիտի, թե նշված հայտերը պետք է ներկայացվեն ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից, թե Հայավտոճան ՊՈԱԿ-ի կողմից, քանի որ սոցիալական վճարները փոխանցվում են ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից: ՀՄՀ – Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր ֆինանսական ղեկավարն առաջարկեց պաշտոնական նամակ ուղարկել սոցիալական ապահովագրության հիմնադրամին նշված հարցի սպառիչ պատասխանը ստանալու համար:

Ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խնդիրների թվում էր գործուղումների կազմակերպումը, մասնավորապես ընդհանուր հարկման ռեժիմով աշխատող հյուրանոցներում մնալու դեպքում հարկազատման խնդրի լուծումը: Այս կապակցությամբ ՀՄՀ –Հայաստան ՊՈԱԿ-ի ճանապարհների ծրագրի ղեկավար Հակոբ Պետրոսյանն առաջարկեց նախապես պայմանագրեր կնքել բոլոր հնարավոր հյուրանոցների հետ և այդ պայմանագրերի հիման վրա տալ հարկազատման տեղեկանքներ այդ կազմակերպություններին: Տրված տեղեկանքներն ունենալով, այդ հյուրանոցները համապատասխան հաշիվ ապրանքագրերում վճարվելիք գուրարները կներկայացնեն առանց ԱԱՀ: Առաջարկն ընդունելի համարվեց ՀՄՀ –Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր ֆինանսական ղեկավարի կողմից, սակայն այն իրագործելու համար կազմակերպչական հարցեր պետք է լուծվեն, մասնավորապես լրացուցիչ աշխատակից ներգրավելու պահանջ է առաջանում ամբողջ Հայաստանի տարածքով մեկ հյուրանոցներ այցելելու և համապատասխան պայմանագրեր կնքելու համար:

Ներկա կազմակերպությունների ներկայացուցիչները շատ կարևոր հարց են համարում ծրագրի իրագործման համար ընտրված շինարարական կազմակերպություններին նյութերի և աշխատանքների մատակարարումը ԱԱՀ-ից ազատելը: ՀՄՀ –Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր ֆինանսական ղեկավարը ներկայացրեց ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության պաշտոնական տեսակետը, ըստ որի մյուս հարկազատումն անհնարին է: Սակայն այս հարցը ներկաների կարծիքով հետագա քննարկման կարիք ունի և ամենայն հավանականությամբ ՀՄՀ –Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի և ՀՄԿ-ի քննարկման նյութ պետք է դառնա:

Վերջում ՀՄՀ – Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր ֆինանսական ղեկավարն ասաց, որ կարևոր է համարում բոլոր համատեղ հետաքրքրություն ներկայացնող հարցերի պարբերաբար քննարկումները և առաջարկեց գրավոր առաջարկություններ ներկայացնել ինչպես համատեղ աշխատանքների ավելի լավ պլանավորման և կազմակերպման համար, այնպես էլ ֆինանսական գործառնությունների հետ կապված տեսանելի խնդիրների նախօրոք վեր հանման և լուծման համար:

Գնումների գործընթացի աշխատանքային խումբ Քննարկումների ամփոփում, Ռ-ուղովՖ Պետրոսյան

Գնումների գծով քննարկումներին մասնակցում էին հետևյալ անձինք՝

1. Ռուդոլֆ Պետրոսյան - «ՀՄՀ-Հայաստան հիմնադրամ» ՊՈԱԿ, Գնումների ղեկավար
2. Գոհար Մուսայելյան - «ՀՄՀ-Հայաստան հիմնադրամ» ՊՈԱԿ, Գնումների մասնագետ
3. Գուրգեն Թադևոսյան - «Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ, Մրցույթների և նախագծերի բաժնի պետ
4. Ալբինա Տոնոյան - «Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ, Գնումների մասնագետ
5. Մարտին Չարյան – ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ԾԻԳ, Գնումների ավագ մասնագետ:

Գնումների աշխատանքային խմբի անդամները ներկայացրեցին և քննարկեցին հետևյալ հարցերը և առաջարկությունները

1. «Հայավտոճան» ՊՈԱԿ-ը առաջարկեց Գնումների ուղեցույցով նախատեսված գնահատող հանձնաժողովի անդամների ինքնակենսագրությունները, որոնք պետք է կցվեն մրցութային հանձնաժողովի փաստաթղթերին յուրաքանչյուր հանձնաժողովի կազմման դեպքում, ներկայացնել մեկ անգամ՝ գնման գործընթացի արագ և արդյունավետ կատարման համար, և միայն հանձնաժողովի կազմում փոփոխություն լինելու դեպքում ուղարկել փոփոխված անդամների ինքնակենսագրությունները: «ՀՄՀ-Հայաստան հիմնադրամ» ՊՈԱԿ-ի Գնումների ղեկավարը նշեց, որ այդ հարցի վերաբերյալ առաջարկ կներկայացվի «Հազարամյակի Մարտահրավեր Կորպորացիա»-ի քննարկմանը (այսուհետ՝ ՀՄԿ):
2. Խմբային քննարկման ժամանակ ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ԾԻԳ-ի Գնումների ավագ մասնագետի կողմից առաջարկվեց որոշակի ընթացակարգային փոփոխություն անել ժամանակի խնայողության նպատակով: Մասնավորապես «Գնումների համաձայնագրում» նշված դեպքերում Կառավարման Խորհրդի և ՀՄԿ կողմից հաստատման ընթացակարգը հեշտացնելու և ժամանակին աշխատանքների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով առաջարկվեց հետևյալը՝ Կառավարման Խորհրդի կողմից փաստաթղթի հաստատումից (“no objection”) հետո ՀՄԿ-ի կողմից նույն փաստաթղթի չհաստատման (“objection”) դեպքում, այդ փաստաթղթի վերանայված տարբերակը չներկայացնել Կառավարման Խորհուրդ, այլ միանգամից վերանայված տարբերակը ներկայացնել ՀՄԿ-ի հաստատմանը: Առաջարկը մերժվեց «ՀՄՀ-Հայաստան հիմնադրամ» ՊՈԱԿ-ի Գնումների ղեկավարի կողմից՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հաստատման ընթացակարգը արդեն իսկ նախատեսված է Գնումների Համաձայնագրով:
3. ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ԾԻԳ-ի կողմից նշվեց նաև, որ նախատեսված ստանդարտ պայմանագրերում որևէ կերպ չի հիշատակվում իրականացնող կազմակերպությունների անունը և նրանց իրավասություններն ու պարտականությունները կոնկրետ տվյալ աշխատանքների կատարման, վերահսկողության և հաշվետվությունների ներկայացման առումով: «ՀՄՀ-Հայաստան հիմնադրամ» ՊՈԱԿ-ի Գնումների ղեկավարը նշեց, որ վերոնշյալ պայմանները նախատեսված են Պարտականությունների շրջանակում (TOR), իսկ Պարտականությունների շրջանակը Պայմանագրի անբաժանելի մասն է կազմում:

Մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբ Քննարկումների ամփոփում, Էսթեր Հակոբյան

Մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի քննարկումներին մասնակցում էին հետևյալ անձինք՝

1. Անահիտ Մարգարյան, Հայավտոճան, մոնիտորինգի և տնտեսական վերլուծությունների մասնագետ
2. Կարապետ Բոյաջյան, Ոռոգման ԾԻԳ, մոնիտորինգի մասնագետ
3. Հրաչյա Զաքոյան, ԷյՍԻԴ-իԱյ/ՎՈԿԱ, տվյալների հավաքագրման և կառավարման խորհրդատու
4. Դիանա Մարտիրոսովա, ԱՎԾ Տնային տնտեսությունների հետազոտության բաժնի պետ
5. Սերգեյ Բալասանյան, ՀՄՀ-Հայաստան, Մոնիտորինգի և գնահատման մասնագետ
6. Էսթեր Հակոբյան, ՀՄՀ-Հայաստան, Մոնիտորինգի և գնահատման ղեկավար

Քննարկման ընթացքում բարձրացվեցին չորս խումբ հարցեր, այդ թվում՝

1. Մոնիտորինգային չափորոշիչների կապը տնտեսագիտական օգտակարության գործակիցների /ՏՕԳ/ հաշվարկների հետ
2. ԱՎԾ-ի կողմից իրականացվող ԿՄԱՀ հետազոտության առնչությունը ծրագրային տարբեր բաղադրիչներին և հետագա համագործակցության բարելավման հնարավորությունները
3. Յուրաքանչյուր իրականացնող կազմակերպության /ԻԿ/ և ՀՄՀ-ի միջև ՄԳ գծով փոխհամագործակցության կարգավիճակը և ձեռնարկվելիք քայլերը
4. Հաշվետվությունների ներկայացման միասնական ձևաչափերը:

Այս հարցերի շուրջ քննարկումների ամփոփ արդյունքները ներկայացվում են ստորև՝

1. Կարևորվեց այն հանգամանքը, որ նախագծման աշխատանքների փուլում իրականացվող ՏՕԳ վերահաշվարկները կարող են նշանակություն ունենալ չափորոշիչների փոփոխության տեսանկյունից և ընդգծվեց, որ ի սկզբանե այդ հաշվարկներն են դրվել չափորոշիչներից շատերի հիմքում: Որոշվեց տարբեր ԻԿ-երի ՄԳ ներկայացուցիչներին տրամադրել տնտեսագիտական վերլուծությունը հիմնավորող այն փաստաթուղթը, որը հանդիսանում է Համաձայնագրի մաս:
2. ԱՎԾ և ՀՄՀ ներկայացուցիչները պարզաբանեցին, թե ընտրանքի և հարցաթերթիկի ինչ փոփոխությունների միջոցով է իրականացվելու ծրագրի մոնիտորինգը և գնահատումը, և որ արդյունքներն են, որ արտացոլելու են տարբեր ԻԿ գործունեությունը: Հաշվի առնելով, որ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, երբ հաջորդ տարվա համար թարմացվելու է հարցաթերթիկը, համապատասխան ենթաձրագրերով բավականին փորձ կուտակված կլինի, որոշվեց այդ ժամանակահատվածում համատեղ վերանայել հարցաթերթիկը:
3. ՀՄՀ ներկայացուցիչները անդրադարձան յուրաքանչյուր ԻԿ ՄԳ շրջանակներում առկա փոխհամագործակցության մակարդակին և ԻԿ ներկայացուցիչների հետ համատեղ նախանշեցին ապագա անելիքները: Հիմնականում, որոշում կայացվեց Հայավտոճանի և ԾԻԳ-ի հետ ունենալ մի շարք հանդիպումներ, իսկ, ԷյՍԻԴ-իԱյ/ՎՈԿԱ-ի հետ ավարտել ՄԳ պլանի մշակումը:
4. ՀՄՀ ներկայացուցիչները ներկայացրեցին ՀՄԿ-ի հետ համատեղ մշակված 2 փաստաթղթերի ձևաչափերը /չափորոշիչների աղյուսակներ և չափորոշիչների տվյալների թերթիկներ/, որոնք կարող են օգտագործվել բոլոր ԻԿ-երի կողմից իրենց

եռամսյակային հաշվետվությունների ընթացքում: Որոշվեց համատեղ քննարկել այդ ձևաչափերը և դրանց օգտագործման հնարավորությունները:

Բնապահպանության և սոցիալական հարցերով աշխատանքային խմբի Քննարկումների ամփոփում, Արմինե Սիմոնյան

Բնապահպանության և սոցիալական հարցերով աշխատանքային խմբի քննարկմանը մասնակցում էին հետևյալ անձիք՝

Հերմինե Ղազումյան	Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ԾԻԳ ՊՀ բնապահպանության մասնագետ
Լիլիթ Հովհաննիսյան	ԷյՍԻԴ-ի Այ/ՎՈԿԱ բնապահպանության/սոցիալական հարցերով փորձագետ
Ալիսա Սավադյան	Հայավտոճան տնօրինություն ՊՈԱԿ-ի բնապահպանության մասնագետ
Կարեն Գրիգորյան	Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ԾԻԳ ՊՀ ճարտարագետ, ջրամբարների գծով պատասխանատու
Արմինե Սիմոնյան	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի բնապահպանության և սոցիալական ազդեցության ղեկավար

Հանդիպման ընթացքում քննարկվեցին հետևյալ հիմնական հարցերը և առաջարկվեցին լուծումները

1. ՀՀ Բնապահպանության նախարարության հետ հնարավորինս արդյունավետ համագործակցության ապահովում

ՀՄՀ-Հայաստան ծրագրի ենթածրագրերի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցող ՀՀ Բնապահպանության նախարարության հետ և դրա կազմում ընդգրկված հետևյալ կառույցների հետ՝

- Բնապահպանական պետական տեսչություն
- Բնապահպանական փորձաքննություն ՊՓԲԸ
- Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն:

Համագործակցության արդյունավետ իրականացման նպատակով որոշվեց մոտակա ժամանակահատվածում հանդիպել ՀՀ բնապահպանության նախարարի հետ՝ ՀՄՀ-Հայաստանի ենթածրագրերի համար տվյալ նախարարությունից համակարգող անձ նշանակելու նպատակով: Համակարգողի առկայությունը հնարավորություն կտա թե ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի և թե իրականացնող կազմակերպությունների բնապահպանության ոլորտին առնչվող մասնագետներին հետազայում ավելի արդյունավետ կազմակերպել իրենց աշխատանքը ՀՀ Բնապահպանության նախարարության հետ:

2. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և բնապահպանական փորձաքննական թույլտվություն ստանալու գործընթացի հնարավորինս արդյունավետ իրականացման ապահովում

Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի շրջանակներում իրականացվող բոլոր աշխատանքները ենթադրում են միայն ճանապարհային ծածկի վերականգնում, իսկ վերակառուցման դեպքում հատվածի երկարությունը չի գերազանցում սահմանային

(1 կմ): Համաձայն ՀՀ օրենսդրությանը վերականգնման և մինչև 1 կմ երկարությամբ

չափանիշը

ճանապարհային հատվածների վերակառուցման աշխատանքները չեն պահանջում ՇՄԱԳ-ի անցկացում:

Ոռոգման ենթածրագրի շրջանակներում ջրամբարների և ինքնահոս ոռոգման համակարգերի կառուցումը պահանջում է ՇՄԱԳ. Բացի այդ մայր ջրանցքների, պոմպայանանների և երրորդ կարգի ջրանցքների վերականգնման/վերակառուցման աշխատանքների մի մասը նույնպես կարող են պահանջել ՇՄԱԳ-ի անցկացում:

Ջրից դեպի շուկա բաղադրիչի շրջանակներում իրականացվող գործողությունները չեն նախատեսում վերակառուցման աշխատանքներ, և ակնկալվում է որ չեն առաջանա խնդիրներ կապված ՇՄԱԳ-ի գործընթացի և թույլտվության ստացման հետ:

Քննարկման արդյունքում, որոշվեց որ ամեն բաղադրիչի մակարդակով կվերանայվեն աշխատանքային պլանները, տվյալների հավաքման, գնահատումնարի կատարման, հաշվետվությունների պատրաստման և թույլտվությունների ստացման հնարավորինս արդյունավետ և սեղմ ժամկետներում իրականացման համար:

3. ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման վերաբերյալ տեղեկատվության տարածման արդյունավետ եղանակների կիրառում

Քննարկման արդյունքում որոշվեց բնապահպանական և սոցիալական տեղեկատվության տարածման և ազդակիր համայնքների բնակիչների արձագանքը ստանալու նպատակով համագործակցել Հայաստանի որոշ մարզերում առկա Բնապահպանական տեղեկատվական հասարակական կենտրոնների (Օրիուս կենտրոններ) հետ: Բացի այդ, կարելի է համագործակցել USAID/AED կազմակերպության կողմից իրականացվող «Համայնքային երիտասարդական կենտրոնների զարգացում» ծրագրի շրջանակներում արդեն իսկ ստեղծված բազմաթիվ կենտրոնների հետ, որոնք գործում են ինչպես մարզային մակարդակով այնպես էլ առանձին համայնքներում: Այս կենտրոններն ունեն համակարգողներ Երևան քաղաքում և նախատեսվում է կազմակերպել հանդիպում վերջիններիս հետ՝ հետագա համագործակցության քայլերը քննարկելու նպատակով:

4. Համագործակցություն այլ միջազգային ծրագրերի հետ, բնապահպանական և սոցիալական տեղեկատվության արդյունավետ հավաքագրման և վերլուծության ապահովման նպատակով

ՀՄՀ-Հայաստան ծրագրով նախատեսվող գործողությունների հետ մեկտեղ ներկայումս Հայաստանում իրականացվում են մի շարք այլ միջազգային ծրագրեր, որոնք ուղղված են ճանապարհների վերականգնմանը և ոռոգման համակարգի բարելավմանը: Սակայն, ծրագրերի միջև համագործակցության և պատշաճ համակարգման պակասը կարող է բերել նմանատիպ աշխատանքների կատարման կրկնությանը և, հետևաբար, լրացուցիչ ֆինանսական ծախսերի: Քննարկման արդյունքում առաջարկվեց կազմակերպել առանձին հանդիպում ճանապարհների և ոռոգման ոլորտում ներկայումս ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների համապատասխան ներկայացուցիչների հետ և քննարկել հնարավոր համագործակցության ու տվյալների փոխանակման արդյունավետ մեխանիզմների ստեղծման և կիրառման հարցերը:

Ամփոփում

ՀՄՀ-Հայաստան ծրագրի և իրականացնող կազմակերպությունների հետ համատեղ աշխատանքային հանդիպման արդյունքները մասնակիցները ամփոփեցին գործնական ճաշի ընթացքում:

ՀՄՀ Գլխավոր ֆինանսական ղեկավար Բարկեն Մնացականյանը ներկայացրեց հանդիպման արդյունքում արձանագրված մի շարք ձեռքբերումներ և գործունեության առաջիկա քայլեր.

Հիմնական ձեռքբերումներ՝

- հանդիպման մասնակիցները ծանոթացան ՀՄՀ-Հայաստան ընդհանուր ծրագրի և իրականացնող կազմակերպությունների գործունեության շրջանակներին, հստակեցրեցին պարտականությունների և հիմնական աշխատանքների բաշխման մեխանիզմները;
- բացահայտվեցին այն հիմնական խնդիրները, որոնք խոչընդոտում են ծրագրի իրականացման ընդհանուր գործընթացը և առաջարկվեցին նոր լուծումներ;
- քննարկվեցին համագործակցության և արդյունավետ կառավարման մեխանիզմները;
- Քննարկվեցին ՀՄԿ-ի և ՀՄՀ-Հայաստանի կողմից որդեգրված մոտեցումները ընդհանուր հարցերին առնչվելիս;
- ՀՄՀ ծրագրի շրջանակներում գործող տարբեր կառույցների ներկայացուցիչները հնարավորություն ունեցան ծանոթանալ միմյանց հետ և հաստատել նոր կապեր հետագա աշխատանքների համակարգումն ավելի արդյունավետ իրականացնելու նպատակով.

Առաջիկա քայլեր՝

- ներկայացված առաջարկությունների հիման վրա ՀՄՀ «Հանրության իրազեկման և հաղորդակցման ռազմավարություն» և «Խորհրդակցական գործընթացի ռազմավարություն» փաստաթղթերի մեջ հստակեցնել իրականացնող կազմակերպությունների դերը, ՀՄՀ-ի և իրականացնող կազմակերպությունների փոխհարաբերությունները այդ բնագավառում և փաստաթղթերի լրամշակված տարբերակը ներկայացնել քննարկման.
- ԻԿ-երի միջև համագործակցությունը ակտիվացնելու նպատակով պարբերաբար կազմակերպել թեմատիկ քննարկումներ ԻԿ-ների և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի մասնակցությամբ.
- արձանագրել գնումների հետ կապված առաջացող հանգույցային խնդիրները և դրանք քննարկել բոլոր հետաքրքրված կողմերի հետ.
- ի կատար ածել ոլորտային խմբերի քննարկումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները: